


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՔՈՐՈՍՆԱՆ
 ՆԱՄԱԿ ԿԱՏ ՈՐ ԵՒ Ե ԳՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ Մազրի
 ԳԱՅԻՐԷ (Հուպպուսիե)



ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԿԻՑՈՍԻ ՀԱՄԱՐ
 Տարեկան, ողջ դանկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐԱՆԵՐ
 Տարեկան Տրամբ 20
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien
ARCHELOVICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԿ Է
 ԵՒ ԹՂԹԱՏԱԻ ԾԱՌԻՔԻ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չեն օրուիր:

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ ՄԸ

Գրական թէ իրաւաբանական պայքար անունը պէտք է տալ այն շարք մը իրարու յաջորդող յօդուածներուն, որոնք վերջերս Գահիրէէն և Աղէքսանդրիայէն կ'ուղղուին Արեւելք օրաթերթին:

Եթէ վայրկեան մը ընդունինք թէ ո՛չ մին է և ոչ միւսն, այնչափ ալ կարեւորութենէ զուրկ պէտք չէ նկատել սակայն անոնց պարունակութիւնը, ազգային անհատական իրաւանց տեսակէտով. պարունակութիւն՝ որուն յենով, օր մը իրաւունք ունենալ պիտի կարծեն Գահիրէի թղթակիցն և մանաւանդ զայն թելադրողներն ըսելու թէ «Հայ թերթերու մէջ արդէն շատ գրուեցաւ այդ խնդիրներուն վրայ, ուստի փակուած պէտք է նկատել...»

Առանց թոյլ տալու որ այս բաւական կարեւոր հարցը մինչև այդ կէտը իւր քայլերը յառաջ մղէ, մենք այժմէն մեր ընթերցողաց ուշադրութեան կ'ենթարկենք զայն, համառօտիւ այս էջերուն մէջ փոխադրելով յայտնուած թեր ու դէմ կարծիքները:

Ամէն ոք անվիճելի կերպով կ'ընդունի թէ՛ ո՛ր է և ինչոր իր տեղւոյն վրայ ուսումնասիրել նախադասելի է, քանի մը պատճառներով, նախ՝ յաճախագէտ է որ նոյն իսկ ամենէն հմուտ օրադրողներու ալ ուշադրութենէն կը վրիպին շատ մը կարեւոր և յարակից պարագաներ. երկրորդ՝ գրաքննական անխիղճ սեղմումը կը ճնշէ յաճախ անոնց միտքը՝ և առաջագրեալ հարցը կերպարանափոխ կը ներկայանայ իւր տեղը. և երրորդ՝ որ ամենէն գլխաւորն է, ու է տեղ մը նուազ տարածուած թերթի մը մէջ վիճաբանութեան նիւթ եղած հարց մը, անով զբաղիլ ուրիշ շատ մը հետաքրքիրներու աչքէն կրնայ վրիպիլ, ինչ որ ստեպ պատահած է Փալառններու երկրին մէջ:

Բուն խնդրոյն վերադառնանք ուրեմն, և մեր ընթերցողները անկողնակալ ոգւով թո՛ղ վճռեն:

Եգիպտոսի առաջնորդ մը ընտրելու ատեն, Աղէքսանդրիոյ ազգայնոց վայելած ընտրական իրաւասութիւն կը հուսարի Գահիրէին, ուստի Աղէքսանդրիայէն թղթկից մը օրինական զանցառութիւն կը հա-

մարի Գաւ. վարչութեան երեսփոխան Ժողովոյն մէջ Աղէքսանդրիոյ ազգայնոց ներկայացուցիչներ չ'ունենալը:

Գահիրէէն ուղղուած ուրիշ թղթակցութիւն մը, հերքել ջանալով Աղէքսանդրիոյ թղթակիցին իրաւացի նկատողութիւնն, կը յարէ թէ «Աղէքսանդրիան եթէ առաջնորդական ընտրութեան մէջ Գահիրէին համահաւասար ձայն ունի, ուրիշ բանի համար տրուած չէ այդ իրաւունքը՝ եթէ ոչ, սա միակ պատճառաւ՝ որ Առաջնորդի ամսականին կէսը ինք կը վճարէ»:

Շատ տարօրինակ կը գտնենք մենք այս թիւր ու անտեղի կարծիքը. որովհետև զայս հաստատող իբր փաստ՝ թղթակիցը, ո՛չ թէ Սահմանադրութեան տրամադրութիւններուն կը հետևի, այլ ժամանակէ մը ի վեր Եգիպտական ոստաններուն մէջ ինչ ինչ նկատումներով բարձի թողի եղած և այլ ընդ այլոյ բացատրութիւններով գործածուած ապօրէն բայց պաշտօնական ըսուած ձևերը մէջ կը բերէ:

Եթէ Աղէքսանդրիան Գահիրէի վարչական մասին մէջ ո՛ր է և է միջամտութիւն չ'կրնար ունենալ, ինչո՞ւ ուրեմն հոն ալ համարաւու մարմին մը չ'կազմուիր Գաւառ. վարչութեան երեսփ. ժողով անունով:

Ազգ. Սահմանադրութիւնը, կեդրոնէն 3—12 ժամ հեռաւորութիւն ունեցող հայաբնակ տեղի մը՝ իրաւունք տուած է կեդր. վարչութեան երեսփ. ժողովին անդամներ տալու. ինչպէս որ Կ. Պոլսոյ երեսփ. ժողովոյն մէջ, օրերով հեռաւորութիւն ունեցող գաւառներն իրենց ներկայացուցիչներն ունին. մինչդեռ Աղէքսանդրիան այսօր Գահիրէէն 3—3 1/2 ժամ հեռաւորութիւն միայն ունի: Այս պարագային բաւական կը համարուի՞ ըսելը թէ «Եկող գացող առաջնորդները ի՞նչ մտածած են այդ մասին կամ Ս. Առաջնորդի մը կարծիքը ի՞նչ եղած է՝ Գաւառ. վարչութեան մէջ Աղէքսանդրիոյ ազգայնոց յատուկ ներկայացուցիչները չ'գտնուելուն համար»:

Երբ Արեւելքին Գահիրէի թղթակիցը՝ փոխանակ օրինական փաստեր մէջտեղ դրնելու, շատ անորոշ կերպով և անցողաբար Ս. Առաջնորդի մը և Ժողովի մը խօսքը կընէ, մենք առանց մտածելու կրնանք ըսել որ Ամեն. Իզմիրլեանն է առաջարկեալ Սրբազան Առաջնորդը, զոր Արեւելք չէ՛ կարողացած

յանուանէ յիշատակել. և ծրագրին ալ՝ անոր կողմէ պատրաստուածն է, որուն գործադրութիւնը մինչև ցարդ տեսնուած չէ, ինչպէս նաև անծանօթ մնացած է անոր պարունակութիւնը:

Բայց մենք այնչափ վստահ ենք, որ Ամեն. Իզմիրլեան՝ այսօր շատ տարբեր ուղղութեամբ պիտի մտածէ, ինչ ուղղութեամբ որ կը մտածէր ու կը դատէր Գահիրէի մէջ գործադրելի օրէնքի մը նկատմամբ, սակէ 8—10 և աւելի տարիներ առաջ: Միևնոյն ատեն չենք ալ հաւատար որ հիմակ իր պատրաստած ծրագրին գործադրութեան վրայ պնդէ, երբ տեսնէ թէ իր ժողովուրդը կատարելապէս սահմանադրական ըլլալ կ'ուզէ:

Եթէ Գահիրէի Ազգային վարչութիւնն կամ «Արեւելք»ի թղթակիցը՝ ծրագրի մը խօսքը ընելով, մոռնալ ուզեն Աղէքսանդրիոյ ազգայնոց վարչութեան մէջ ներկայացուցիչներ ունենալու իրաւասութիւնը, մենք կը յիշեցնենք որ 92ի երեսփոխանական ընտրութեանց ժամանակ գիւղերէն ալ երեսփոխան մը առնուած է. ի՞նչ կը նշանակէր այդ և ո՞ր ծրագրի կամ օրէնքի տրամադրութեան հետևելով էր:

Իրաւ է թէ Ամեն. Իզմիրլեան հայ ժողովուրդին ամեն խաւերուն մէջ յարգանաց արժանացած է. սակայն անոր ընծայուած յարգանքը պէտք չէ՛ որ Եգիպտոսի վարչութիւնն և իրեն արբանեակները ի վրաս ազգին ի կիր արկանեն:

Կրնայ ըլլալ որ Ամեն. Իզմիրլեան Պատարարութեան օրէնքին (Սահմանադրութեան) ոգիին հաւատարիմ մնացած ըլլայ և պատրաստած ծրագիր—կանոնագիրը, Եգիպտոսի թեմին տեղական հանգամանացը լաւ յարմարացած ըլլայ. ըստ մեզ լաւագոյն է՝ որ այդ ծրագրի խօսքը ընելէ և գործադրութեան դնելէ առաջ, անոր պարունակութիւնը Փարառնի երկրին հայ բնակչացը նկատառութեանը յանձնուի. ա՛յն ատեն միայն ընդունուած օրէնքներու կարգը կրնայ անցնիլ և իբր փաստ գործածուիլ. սպա թէ ոչ՝ իրաւունքի կողմը Աղէքսանդրիոյ թղթակցինն է, որուն փաստերը մեր ազգային օրինաց տրամադրութիւններն են:

Մութի մէջ խաբխափելով չ'քալենք:
 Ե. Թ.

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌԹԻԻ

Անգղիական անեղ կայսրութիւնը եւ միանգամայն աշխարհիս խաղաղութիւնը շարաչարհարուածներ կը կրեն, մի քանի ամիս առաջ գէթ մեր մէջէն շատերուն անձանթ փոքրաթիւ ժողովուրդի մը կողմէն: Հարաւային Աֆրիկէի մէկ ծայրը բրիտանական զօրութեան ենթարկուած անելանելի կացութիւնը անազին քանակութեամբ մելանիներ թափել կուտայ ամեն ազգաց լրագրիներուն եւ գիւտանագէտներուն, եւ ա՛լ աւելի մեծ քանակութեամբ արիւն՝ բիւրաւոր քաշերու:

Հակառակ այն ընդհանուր համակրանաց զոր Պօէրնեքը կ'ազգեն, հակառակ վեհանճնութեան եւ մարդասիրութեան այն գնահատելի դատերուն զոր իրենց թշնամեաց կողմէն վայրենի կոչուած այդ երկրագործ եւ հովիւք կուտան ամենէն քաղաքակիրթ (•) աղգաց, հակառակ արդարաւիրական այն ժշտավաւ զգացման զոր մէն մի հարուստհարեալ կը կրէ իր արտին խորը, վերջապէս հակառակ այն քանաճողական արարքներուն որուն աշխարհս գիտակ բայց շարժելու անկարողնան գիտաստեղ պիտի ըլլայ անգղիական զինուոց յաղթականութեան պարագային, խիստ մօտալուտ սարսափելի արիւնհեղութեանց առաջն տեսելու համար եւ ի սէր խաղաղութեան, մաղթելի էր որ Անգղիոյ հզօր կայսրութիւնը աւելի հզօր եւ աւելի փառապանծ ելլէր այս անպէտեղիչ կերպով անհաւասար կռիւնէն: Դժբաղդաբար ելքը չպիտի համապատասխանէ մեր փափաքին:

Երկաթեայ նախարարապետը Պիզմարք՝ կըսուի՝ արդէն զուշակած էր որ Հարաւային Աֆրիկէ Անգղիական կայսրութեան գերեզմանը պիտի ըլլայ: Չուրանալով հանգերձ այդ մեծ քաղաքագէտին սրտտեսութիւնը՝ ըսենք որ աւելի ճիշդ կ'ըլլար «զուշակած»ին սեղ «արձագանգած» զինչ Այդ անձնաւորութեան քանակագողներուն զայրոյթը չ'ըրբօքելու համար սա եւս ըսենք որ առաջարկուած բառափոխութիւնը Պիզմարքին փառքը ոչ միայն չ'սուազեցներ այլ կ'աւելցունէ, զայն մեզ ներկայացնելով իբրեւ մի քննող, խորհող, հետազօտող եւ մանաւանդ պրպտող: Թերեւս իր այդ բացառիկ յատկութեանց կը պարտի այն գերակայութիւնը որով օժտեց իր հայրենիքը:

Յատկութիւնք՝ որոնց չ'գոյութիւնը Պ. Չէմպրէյնի քով ծնունդ տուաւ Վիգթորիա թագուհի-կայսրուհւոյն՝ այս քառամեկուրդ պատերազմին, որուն մէջ կը տապալակի այսօր բրիտանական կայսրութիւնը եւ որուն հետեւանքը պիտի ըլլայ նորանոր արեան լիճեր՝ կազմուած անհամար մարդկային էակաց զինամար:

Պ. Չէմպրէյնի Անգղիան Եգիպտոսէն մինչեւ Բարեյուսոյ գլուխը տիրանալով եւ յետոյ Հայէ-չիտանը գրաւելով, նախ ֆրանսական, ապա կեղ-րոնական Եւրոպայի տէրութեանց նաւատորմիդները ոչնչացնելով, առ ժամանակ մի Ամերիկայի, Ճաբոնի եւ Չինաստանի հետ միանալով Ռուսիան անկարողութեան մատնելէն ետքը, պատեհ առթին իր գաշակիչներուն ուժն ալ ջախջախելով կը յաւակնէր տիեզերապետութեան: Բայց արդեօք կ'անգրիտէր որ մարդկային տիեզերապետութիւնը մեռաւ եւ թողուեցաւ Հռովմէական կայսրութեան հետ:

Ինչպէս կը տեսնուի փոքր ծրագիր մը չ'էր երեւակայեր Անգղիական կառավարութիւնը եւ շնորհիւ այն յարաբեական ոգոյն, զոր միշտ յարգած են իր պետական մարդիկը՝ անշուշտ յուսալիր էր վաղ կամ անապան իրագործուած տեսնել իր այդ յատակագիծը, առանց ի նկատի առնելու որ՝ ինչպէս ըսինք՝ անցան տիեզերապետութեան դարերը: Եւ նա՛ յանձնապատասխան եւ շացած՝ կը շարունակէր իր արշաւատը ընթացքը, մինչեւ որ խօլաբար արհամարհուած աւազի հասիկ մը զայն գայթեցուց անյատակ լճի մը եզրին վրայ: Գիտակցութիւնն ունի՝ արդեօք իր այս ծանր վիճակին: Ո՛վ գիտէ:

Բայց երբ Պօէրնեքուն զէմ խրկուած ընդհանուր հրամանատար Սըր Ռէտուէրս Պուլլըրին իսկ արդէն տեղի ունեցած պարտութիւնէն ետքը ՂԵՐ-կուելիք ուրիշ խուճեր եւ առաւել կամ նուազ համբաւաւոր զօրապետներ եւս յաղթուն, երբ այդ պարտութեանց բնական հետեւանքով իր

ստացուածքներէն մի քանիններն ալ ապստամբելու միտին եւ երբ տէրութիւնը իրեն զէմ բացէ ի բաց սպառնական դիրք բռնեն, թերեւս այն ատեն պիտի հասկնայ թէ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»:

Անկարելի է կարծել որ Պ. Չէմպրէյնի պաշտօնակիցները՝ որոնք աշխարհիս առաջնակարգ պետական մարդոց համբաւը կը վայելեն՝ չ'խորհին այս հաւանականութեանց վրայ եւ մի քիչ ալ վրդովուելով չ'փափաքին օր առաջ վերջ տալ այս վտանգալի կացութեան: Դժբաղդաբար իրենց այդ փափաքին իրականացումը գրեթէ անկարելիութեան կը բաղթի, սա պարզ պատճառաւ որ՝ ցորչափ Անգղիական զօրութիւնը պարտութիւն կրէ թրանսվալի մէջ, զինուոց պատիւը եւ հասարակաց կարծիքը Անգղիական կառավարութեան կ'արգելին հաշտութեան խօսք բանալ մարտակիցներուն հետ, եւ Պօէրնեքն ալ յաղթուելու միտք չունին:

Ինչ որ ալ ըլլայ, թրանսվալական պատերազմէն ետքը եւ թերեւս միեւնոյն ատեն Բրիտանական կայսրութեան ինքնապահպանական շահն իսկ կը պահանջէ ձեռնարկել ուրիշ մի աւելի մեծ պատերազմի — թերեւս ծովային — Հարաւային Աֆրիկէի արեւուն աակ հետզհետէ աւելի նսեմանալու վրայ եղող իր զինուոց պատիւը ոսկեզօծելու նպատակաւ: Կարծեմ հոգ փնտռելու է գաղտնիք այն նաւախմբումին զոր կրնէ Միջերկրականի մէջ: Բայց ո՞վ զինք կրնայ ապահով-ցընել թէ աւելի բաղդաւոր պիտի ըլլայ նոյն իսկ իրենք կարծուած տարրին մէջ, քանի որ տակաւին ամեն օրիորականալու վրայ է սա ճշմարտութիւնը: «Ոչ թէ ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւոր եւ ոչ սկայ ի բազում զօրութեան իւրում»:

Անա Անգղիական պարտութեանց հաւանական հետեւանքն, կրեցող այս արիւնհեղութեանց տեղի չտալու համար փափաքելի էր որ Պօէրնեքը յաղթուէին. եւ շատո՛նց: Բայց «Մորհուրք մարդկան, կամք Աստուծոյ»:

Գահիրէ 20/12/99

Ա. Չ. Պ. Ա. Յ. Ի. Ն

Անցեալ կիսկի 5/17 դեկտ. համեմատականի մնացած 3 երեսփոխաններու ընտրութիւնը կատարուած է 40 քուէարկուներով: Երկու անձինք ընտրուած եւ երկուք ալ հաւասար քուէ ստացած են քուէարկուաց թուոյն կէսէն պակաս ըլլալու պայմանաւ:

— Չորս հինգ օր յառաջ քաղաքս ժամանեց Տիար Թ. Պատուիրածեան համբաւաւոր հայ ողբերգուն եւ ժամանակ մը իր վտանգեալ առողջութիւնը պիտի դարմանէ:

Տիար Թ. Պատուիրածեան իր ասպարէզին զո՛ն է, այն ասպարէզին, որուն կարեւորութիւնը եւ արժէքը այստեղի հայերը հասկնալու համար դեռ բաւական ժամանակի պէտք ունին:

— Նամակներ ստացած ենք Երեսփոխանական ժողովոյ ընտրութեանց եւ ձեռք առնուած ապօրինի միջոցներուն դէմ բողոքող, որ առաջիկայիւ հետզհետէ պիտի հրատարակենք, որչափ որ ներեն «Արշալոյս»ի էջերը:

— Մեզ զրկուած է նոյնպէս օրինակը՝ Սահմանադրութեան պահպանման հասանձախնդիր եգիպտահայոց կողմէ ստորագրեալ հանրագրին, որ յաջորդ թուով պիտի հրատարակենք:

— Մանչեսթրէն Օրիորդ Բաք, հայոց Կ. Պօլսոյ պատրիարքարանին զրկած է 40 անգլ. ոսկուոյ գումար մը եւ 20 ոսկի ալ շուտով պիտի զրկէ, Արաբկիրի որբանոցին յասուկացուելու համար:

Օրիորդ Բաք, տարուէ տարի 60 անգլ. ոսկուոյ գումար մը պիտի զրկէ պատրիարքարանին, միեւնոյն նպատակաւ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

18 Դեկտ. 99

Ժէնէրալ Կաթաքը իր զօրքերը Սթէրքսթրում կը համախմբէ, իսկ Ժէնէրալ Պրէնչ՝ Արէնտէլ:

Ժէնէրալ Պիւլլըրի հեռագրական լուրերու ընդհատումը մտահոգութիւն կը պատճառէ Անգլիոյ մէջ:

20 Դեկտ. 99

Լոնտոնայէ անպաշտօն աղբւրներէ ըստացուած տեղեկութիւններու նայելով, Լորտ Մէթուին՝ Դեկտ. 15 ին կրկին փորձած է Օրէնձ Բիլլեր ի կողմն անցնիլ. Ժէնէրալ Քրոնտ Ետ մղած ու ամէն կողմէ պաշարած է զինք:

20 Դե տ. 99

Լորտ Մէթուինի բանակատեղոյն եւ Օրէնձ Բիլլերի միջեւ երկաթուղոյ գծերն եւ հեռագրական թելերն կտրուած են:

20 Դեկտ. 99

Ապտիւլ Համիտի քենեկալը՝ Մահմուտ փաշա, որ յաջողած էր Կ. Պօլսէն փախչիլ, Մարսիլիա հասած է:

20 Դեկ. 99

Ամսոյս 15ին Պօէրնեքու զօրաբանակները սկսան ուժգնորէ ժէնէրալ Մէթուինի Մոսսա Բիլլեր բռնած դիրքերը:

21 Դեկտ. 99

Չինաստան գոհացում տուած է Պրանսայի Բուանկ Զեռու Ուանկի երկրին սահմանագծումի եւ երկու զօրավարներու սպանման մասին:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Կ'ըսուի թէ Լորտ Քրոմլըր տեսակցութիւն մ'ըրած է Ն. Վ. Բ. Խտիլի հետ՝ խտիվական դերդաստանին ամաթոշակներ յատկացնելու խնդրոյ մասին: Ն. Բ. վսեմութիւնը բոստացած է նկատողութեան առնել առաջարկը ու լուծում մը տալ տարեգլխէ առաջ:

— Գիշ օրէն, բարձրագոյն հրամանաւ Սըր Բէճինարտ Ուինկէթ, Խալիֆա Ապտիւլ-Լահիթ յաղթողը, Եգիպտական բանակին Սէրտար եւ Սուտանի ընդհանուր կառավարիչ պիտի անուանուի՝ յաջորդելով Լորտ Քրիչներ փաշաի, որ իրկուշաբթի օր Խարթումէն մեկնած է Լանտրա երթալու համար, եւ անկից ի թրանսվալ, իր նոր պաշտօնատեղին:

— Թրան ի մէջ հետեւեալը կը կարգանք — Փոքր Ալոյ խորբէն ստացուած տեղեկութիւններ որոշ մանրամասնութիւններ կուտան այն ընդհարումներու վրայ, որ անցեալ նոյեմբեր 9ին տեղի ունեցած են հայ եւ քուրտ խմբերու միջև: Այդ թուականին՝ Ռուսիան եկող 120 զինեալ հայերու խումբ մը Ալաշկերտի նահանգը կը մտնէ եւ թոհրաք Դալէի չրվակայներէն Աստուր(•) գիւփն վրայ կը յարձակի: Ա-

ընամուտին դէմ, թրքական զորամասեր, ոստիկաններ և քրդեր, տեղւոյն Միւստիբը ի գլուխ ունենալով, կը պաշարեն եկեղեցին՝ հրամայելով հայերուն որ զէնքերնին ձգեն ու անձնատուր ըլլան։ Այս վերջիններէն մին՝ ի պատասխանի կրակ կ'ընէ և Մուստիբը գիտապատ կ'իյնայ։ Ասոր վրայ ընդհանուր նշան կը տրուի։ Բայց, գիշերուան խաւարի շնորհիւ, հայերը կը յաջողին սահմանագլուխ վերադառնալ սոսկալի կռիւէ մը վերջ, որուն հետևանք 13 հայ կը մեռնին և երկուք ալ գերի կը բռնուին։ Թրքաց կողմէն ալ նոյնչափ կորուստ կունենան։

Պիթիլիսի, Մուշի և Վանի կուսակալները նոյնհետապէս լուր կը ղրկեն քրդերուն, համարելի վաշտերուն և այլն, որ եթէ շարունակեն լլկել հայ բնակիչները՝ Կ. Պօլսէն ազգու հրամաններ ունին իրենց դէմ կանոնաւոր բանակ մը հանելու։

Այս բարերար հրամանը փրկութիւնը կ'ըլլայ խեղճ ժողովրդեան, որուն թշուառութիւնը, կ'ըսէ Թան, այնքան ահաբեկ է, որ պիտի նախընտրէր մահը և կամ կոտորած մը, իր անտանելի սանջանքներուն անմիջական վերջ մը դնող։ Այդ խեղճ ժողովուրդը հաց չունի ուտելու, և որովհետև կառավարութիւնը չ'ընդատրեր ասոնց ի նպաստ հանգանակութիւններ՝ վախնալով որ մի գուցէ ուրիշ նպատակի չ'ծառայեցուցուին անոնք՝ հետևութիւնն այն է՝ որ ամէն մարդասէր անձնատուրութիւններ, միսիօնար և կամ ուրիշներ՝ բոլորովին անկարող են այդ խեղճերուն օգնութեան ձեռն կարկառելու։

Անցեալ շաբաթ, Պատրիարքարանը 130 սակի զրկած է չորս վիլայէթներուն մէջ բաշխուելու համար, կաթիլ մը շուր անհուն ուղիւնի մէջ։

— Տեղական դատարանի նախնական ատենանք մերժեց երէկ իրենց պահանջներէն կարգ մը հայեր՝ որոնք դատ բացած էին ոստիկանութեան դէմ, այն ձերբակալութիւններու համար զոր ոստիկանութիւնը յանրաւի ըրած էր Գահիրէի հայոց եկեղեցւոյն մէջ, վերջերս տեղի ունեցած խառնակութիւններուն առթիւ։

— Կ. Պօլսէն առնուած լուրերէն կը տեղեկանանք՝ որ խումբ մը իսլամներ ևս ձերբակալուած են Դեկտեմբեր 11ի գիշերը, հակակառավարական գաղափարներ արծարծած ըլլալու պատճառով։ Չերբակալ-

վաճակներու շարքէն է Սուլթան Ահմետ մըզկիթի գլխաւոր իմամն ալ։

— Ծար s'Աշխատանքի մէջ կը կարգանք ու ձէլալէտտին փաշա՝ այս տարի անձամբ Եգիպտոս պիտի գայ, երիտասարդութուրք-անառակ սրգիները- գեղնորակ մետաղի շնորհիւ, զղջումի բերելով, Վասիփոի ափունքը վերադարձնելու համար։

Այս գործին համար ձէլալէտտին փաշա մասնաւոր agent մ'ունէր արդէն հասահա թէ ինչու իր գալուստը նշանակութեան ղուրկ չէ։ fumisterie մ'ըլլալու է հոն։

— Մի քանի օրէն՝ Փիէն Գիյար, Մալթո և Իւրպէն Կօհիէ, ինչպէս նաև «Օռօռ»ի արտօնատէրը, Օսմանեան կառավարութեան բողոքին վրայ Փարիզի Զրդ պատժական ատենին առջեւ պիտի կանչուին, Սուլթան Համիտի դէմ վիրաւորիչ յօդուածներ գրած ըլլալուն համար։

— Թան լրագրէն կը քաղենք հետևեալը։

Պրզանսօն անուանեալ Ֆրանսացի մը որ վերջերս վերադարձած է Թրանսլալի ոսկւոյ հանքերէն, ուրկից ժառանգած ըլլալու է, ինչպէս ինք ալ կը խոստովանի, բուն ասեղութիւն մը պօքրներու հակառակորդներուն դէմ, անցեալ նոյեմբ. 9ին կէս գիշերուան դէմ, բազմած էր Պօն Նուվէլ պողոտայի սրճարանին երթին վրայ և Թրանսլալի վերջին լուրերը կարդալով զբաղած, երբ իր ընթերցանութեանը մէջ վրդովուեցաւ «քաբաուէթ» վաճառողի մը Two pence! two pence! ձանձրացուցիչ կանչուրուտութեն։ Բարկացած այս վերջնոյն պընդուսներէն և կարծելով թէ այդ պտղավաճառը Անգլիացի մ'է, լաւ մը կը խարազանէ ողորմելի արարած մը, Մուրիքեան անուամբ հայ մ'որ երեք տարիէ ի վեր Ֆրանսա կը գտնուի։

Պ. Պրզանսօն՝ որուն դէմ դատ բացուած էր, դատապարտուեցաւ 200 ֆրանք տուգանքի և 1300 ֆր. ֆնասահատուցումի։

ՏԻՊԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ — Անգլիական հայրենասիրութիւնը այլանդակ՝ բայց հետաքրքրաշարժ ու զուարճալի գոյներու տակ ի գործ կը դրուի այս պահուս։ Մեր ընթերցողները թերևս կարծեն թէ իրենց երևակայացածին նման բաներ ըլլան. ոչ։

Լոնտրաի վաճառատուներէն մին պատերազմական նախարարութեան կը նուիրէ տասը pence Plum-pudding, ծննդեան առթիւ հարաւային ափրիկէի մէջ կուռող զօրքերուն բաշխուելու համար։ Ամէն pudding (տեսակ

մը ըկանդակակ) զետեղուած է մասնաւոր տաշխուրանի (terrines) մը մէջ, ամէն տաշխուրան կրելով հետեւեալ վերտառութիւնը։ — Merry Christmas! — շնորհաւոր ծնունդ. կը մաղթենք ձեզ վաղընգիփոյթ և յաղթական վերադարձ։

Խումբ մը լուսանկարիչներ, զօրաց տենդոտ մեկնումէն առաջ, յանձն առած են ձրիաբար անոնց կենդանագիրները առնել ու իրր souvenir՝ նուիրել զանոնք անոնց ընտանեաց, կնոջ, նշանածի, կամ զաւակաց։

Բայց, փառքը կամ հնարամտութիւնը պէտք է տեղի տան կահավաճառներուն առաջ։ Ասոնց մէջ գտնուած են այնպիսիներ որոնք նուիրած են Tommy-Atkins ին (ասի ամէն անգլիական զօրքի տրուած մտերմական ծանօթ անունն է) տան կարասի մը, au complet, որուն գինը պիտի վճարուի միայն այն ատեն՝ երբ զօրքը յաղթական և փառապանծ, վերադառնայ հայրենի գաւառը։ Այն պահուն սակայն, երբ զօրքն զոհ երթայ Պօքրներու անգուլթ մի գնտակին, կահ կարասին ամբողջութեամբը պիտի մնայ անոր ժառանգորդներուն։

— ՀԱՄԱՌՈՅՆՆԵՐՈՒ ԱՃՈՒՐԿ մը կատարուել է Լոնտրոնի «Բալէյս Սիէթա» թատրոնի մէջ, Հարաւ Ամերիկեան պատերազմին զոհ գացող զինուորներու այրիներուն և որբերուն ի նպաստ։ Անգլիական թերթերը կը յիշեն բարձրագոյն գիներէն մէկ քանին։ Միս Մապէլի մէկ լամբոյրը՝ 3 սակի, Միս Գէթի մէկ համբոյրը 4 սակի, և այսպէս շարունակաբար։ Այս բարեգործական երեկոյթին մէջ, արական սեռին արժանապատուութիւնն ալ յարգելու համար, ներկայացման վերջին պահուն մանկամարդանգլուհի մը 3 սակի նուիրեր է՝ հանդէսին կարգադիր մտանախուժի անդամներուն մէկէն համբոյր մը առնելու համար։

ՕՐԱՑՈՅՑ

1900

ԹՈՒԱՎԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆՊԱՆՈՅԻՆ

Կ. ՊՕԼՍՈՑ

Կը գտնուի «Արշալոյս» խմբագրատունը և Շարա Ապտիւլ Ազիզ Տիար Կ. Երզնկացեանի քով։

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱՔՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՅԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ I ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները։

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 Միլիոն 430 Միլիոն որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է։

Ս. ԱՆՈՒՍԻ ԸՆԳՀԱՆՈՐ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՅ Ի ԴԵՏԻՐԷՅ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ։

ԱՆՉՊՈՒՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱԳԷՔՍԱՆԳՐԻԱ

ՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպաստ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ Բազմավեպ բացառիկ պրակ մը պիտի հրատարակէ: Թերթին երկայնութիւնը 42 հարիւրորդամէթր. լայնքը 42 հարիւրորդամէթր: Թերթը պիտի բաղկանայ 40 էջերէ, ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Պիտի պարունակէ ժողովրդեան ուշագրաւ, հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ:

Բազմավեպի այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը պիտի հրատարակուի իբրեւ անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration arménienne. նման եւրոպական մեծ ազգայն շաբաթական պատկերազարդ թերթերու:

Պիտի տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն:

Գինն է ԿԱՆՏՆԻԿ 2, 50 ֆր. 1 րր. 50 սէնթ:

Այս ծանուցաբով կը հրաւիրուին մտադրեալ այն ամէն ազնիւ ու դժած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին համեստ լուծայ մը բարեհաճին ձգել հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նըպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին Բազմավեպի պրակներուն մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ պիտի տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանթիմ. փափաքողք թող փութան յղել իրենց ծանուցումները:

Բազմավեպի հասցէն է.
Rédaction de la Revue PAZMAVEB
(St. Lazare) VENISE, Italie.

ԲԱՑՈՒԱԾ Է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՆՏՆԻԿ 1 Ձրամբ, յե օպագրուքեան 5 Գ. Բ. Բ. Բ.

ՅԱՏ ԶՈՒՆՔԱՆԻ ԵՒ ՀՐԱՀԱՆԳԻՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԻՔԴՈՏՆԵՐ ԵՒ ՎԷՊԻԿՆԵՐ

ԿԱՄ

ՄԱՐԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ ՎԱՐԱԳՈՅՐԸ

անունով գրքին որ Հայկական, Յունական, Ռուսական, Արաբական, Պարսկական եւ Թրքական կեանքերէ առնուած է:


Հաւաքեց եւ կարգաւորեց
Մ. ՀԱՅՊՈՒՆԻ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ տ կարանէն մաքուր եւ ճաշակաւոր տպագրութեամբ շուտով լոյս կը տեսնէ եւ 16 էջերէ բաղկացեալ տետրակներով ամեն շաբթու կը յանձնուի բաժանորդաց սոյն օգտակար հրատարակութիւնը. այլազան ազգերու կեանքէն առնուած բազմազան պատկերներով. որք ամեն գառակարգի ընթերցողներն՝ այր կամ կին. օւսեալ կամ անուս. հարուստ կամ աղքատ, ծիծաղներով գուարճացնելէ զատ, պիտի ծանօթացնէ աշխարհի զարմանալի եւ սարսափելի գաղտնիքները, հիանալի միջոցները երջանիկ լինելու. հաւաքուած գրքեր, իմաստուն դատաւորներ, ապուշ ամուսիններ, ճարպիկ խաբերաներ եւլն. եւլն. իրենց գործերով եւ անոնց արդիւնքներովը, որոնք պիտի նպաստեն ընթերցողին կուշտ, կուշտ խնդալէ յետոյ, կենաց պայքարին մէջ յաջողել եւ չի խաբուիլ ամենեւին. եւ լինիլ հմուտ եւ փորձառու կեանքի ամեն պարագաներուն մէջ:

Գրավաճարներու եւ 20 օրինակէ աւելի բաժանորդագրուողներու մասնաւոր գեղջ պիտի լինի Դիմել առ Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ Ի Գահիրէ (Հապտանիյէ):

Վ. Ա. ՃԱՆՈՒՍՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ
ՇՍՐԷ-Ա. ՊՏԻԻԿ-Ա. ՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանաւորութիւն, թէյի ճաշակն եւ նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃՍՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԻԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձրմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնախի հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ կ. Պոլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն թէյերու օտակի, կօխի և գնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆՏՆԻԿ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

3 — 50

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	5327	չահած է	Ձրանք	1000
Բ. "	5258	"	"	200
Գ. "	7898	"	"	100
Դ. "	3416	"	"	50
Ե. "	3484	"	"	50

Հետևելալք 25 ական ֆրանք կը շահին

6549	5324	2717	2484	5843	2594
3367	2888	5994	528	392	7929
5300	3904	8154	7818	1111	8183
	453	3269	9380	8779	

ՄԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարզեներն ութը օրէն չեն գանձուիր, ընկերութեան անտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրուքիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄՈՒԹԵԱՆ

Վ. Ա. ՃԱՆՈՒՍՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Պ. Ս. ԶԻՐԷ, — Մաւտի փողոյ, — ԿԱՆՏՆԻԿ

Ս. եւ Ս. Սեհնավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քննօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՅԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղ:

Ձրանսական եւ ամերիկեան պարանաց ամենաընտիր տեսակներէն զարդեղներ, օղբեր, մասանիներ եւայլն:

Ս. մէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

42—50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար.

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Փոօգի Պաֆ վաճառատան մօտեր, Կամե-իլ-Պեմաքի ճիւղ դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փութով մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ ևայլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

16—50

Le Gérant Dr. A. S. HAGOPIAN